ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումների դասընթացների

Առարկան՝ Հասարակագիտություն

Թեման՝ Մարդ և հասարակությունը:

Ժամանակակից հասարակության

Տեղեկատվական հասարակության

Ուսուցիչը Էլվինա Պարոնյան

Դպրոցը՝ Լեհվազի միջնակարգ դպրոց

Խմբի պատասխանատու դասախոսը՝

2023թ.

Բովանդակություն

Մարդ և հասարակություն _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 3 - 9

Ժամանակակից հասարակության կառուցվածքը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ -- 10 - 13

Տեղեկատվական հասարակության ----------14-17

Եզրակացություն ---------- 18 - 19

Ուսումնաօժանդակ նյութի ներդրումը, վերլուծությունը և քննարկումը -----20

Օգտագործված գրականության ցանկ _ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության աշխատանքի նպատակն է՝ հետազոտել և գնահատել մարդու դերը հասարակության մեջ : Վերլուծել մարդու և հասարակության միջև ընկած հարաբերությունները : Հասարակության ազդելը մարդու մտածելակերպի , շարժուձևի, հոգեբանության վրա :

Մարդու ինքնագիտակցությունը որոշում է կենսական դիրքորոշումը, վարքագծի սկզբունքները, որոնք հիմնված են աշխարհայացքային կողմնորոշումների, սոցիալական արժեքների, գաղափարների և բարոյական նորմերի վրա

Վերլուծելով հասարակական տարբեր գործընթացները և հասկանալով այն՝ կարելի է բավականին ճշգրիտ կանխատեսել քաղաքական այս կամ այն իրադարձության արդյունքը:

ՄԱՐԴ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարդ, անհատ, անձ, անձնավորություն... Մարդը իր ծննդյան օրից մինչև կյանքի վերջ, ապրում է հասարակության մեջ և շփվում է մարդկանց հետ: Մարդու ազատ ընտրությամբ է, մեծամասամբ, պայմանավորված նրա տեղը եւ դերը հասարակության մեջ:

Մարդկանց մեծամասնությունը, ինչ որ քայլ անելուց առաջ հաշվի է առնում՝հասարակության կարծիքը;

Հասարակությունը կամ մարդկային հասարակությունը անհատների փոխադարձ, մշտական հարաբերությունների մեջ գտնվող մարդկանց խումբ է կամ միևնույն աշխարհագրական կամ վիրտուալ տարածության մեջ գտնվող մեծ սոցիալական խումբ է, որ կառավարվում է միևնույն քաղաքական իշխանությամբ և գերակշռող մշակութային սպասումներով ։

Հասարակական գիտություններում, ավելի մեծ հասարակությունը հաճախ ենթարկվում է ենթախմբերի շերտավորման:

Հասարակությունը իր անդամներին կարող է հնարավորություն ընձեռնել, որքանով որ հնարավոր է, օգուտներ քաղելու այն եղանակով, որոնք անհատական ձևով հնարավոր չէ: Եվ անհատական և սոցիալական օգուտները կարող են տարբերվել կամ շատ դեպքերում համընկնել:

Հասարակությունը կարող է բաղկացած լինել համակարծիք անձանցից, ովքեր մեծ հասարակություններում ունեն իրենց դոմինանտ նորմերը և արժեքները: Այդ տերմինը, որը երբեմն անվանում են որպես ենթամշակույթ, լայնորեն կիրառվում է քրեաբանության մեջ:

Հասարակությունը պետք է իր մեջ դաստիարակի արժեքների գնահատության ճիշտ օրինաչափություններ: Այդ օրինաչափությունների խաթարման մեղքը և այն վերացնելու ճանապարհը միայն գրականության, մշակույթի մարդկանց մեջ չպետք է փնտրել: Հասարակությունն ընդհանրապես պետք է զգաստ լինի իր արժեքների նկատմամբ: Խելացի, դաստիարակված, կրթված, հասուն ու հարգալից մարդն ավելի շուտ է ընդունվում հասարակության կողմից ։ Մարդը և հասարակությունը առաջացել եմ միաժամանակ, և դրանք իրար հակադրել չիկարելի: «Մարդ» հասկացությունը առավել ընդհանրական է և իր մեջ ամփոփում է «անհատ», «անհատականություն» հասկացությունները: Մարդը բիոսոցիալական էակ է, որը նաև ունի ստեղծագործական ունակություններ: Մարդը միակ էակն է, որը բնության կողմից օժտվել է «ներաշխարհով»: Աշխարհ գալով որպես անհատ՝ մարդը ձեռք է բերում սոցիալական որակներ, կատարում տարբեր հասարակական դերեր, ձեռք բերում իրավունքներ և ստանձնում պարտավորություններ, վերահսկում իր վարքը և պատասխանատվություն կրում դրա համար: «Անհատ» հասկացությունը ցույց է տալիս պատկանելիությունը մարդկային ցեղին և օգտագործելի չէ կենդանական աշխարհի համար:

Հետևաբար «անհատը» սոցիալական հասկացություն է: Բայց այն վերացական է, քանի որ ցույց չի տալիս այն առանձնահատկությունները, որոնց շնորհիվ անհատը դառնում է անհատականություն: Մարդը հասարակական էակ է ոչ այն պատճառով, որ մարդ է դառնում հասարակության մեջ, այլ այն, որ միայն հասարակական կյանքում նա կարող է իրականացնել «բնությունից» իրեն տրված հնարավորությունները:

Անժխտելի է այն փաստը, որ բնությունը մարդկանց օժտում է տարբեր շնորհներով, միանգամայն տարբեր հատկություններով և հնարավորություններով, որոնք, սակայն, ոչ մի նշանակություն չունեն, եթե հասարակությունը չի նպաստում մարդու լավագույն որակների զարգացմանը:

Այսինքն՝սոցիոլոգները պնդումեն, որ բնության տվածը դեռևս քիչ է, այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել, թե ինչպես է կառուցված հասարակությունը, ինչպես է մարդը հարաբերում հասարակությանը, և վերջինս մարդու զարգացման համար ինչ պայմաններ է ստեղծում: Հարցի պատմական քննարկումը բերում է այն համոզման, որ սոցիալական էվոլյուցիայի ցածր աստիճանից բարձրին անցմանը զուգընթաց ընդլայնվում են մարդու զարգացման սոցիալական հնարավորությունները:

Պատահական չէ, որ արտաքին սոցիալական միջավայրից մարդու կախվածության գաղափարն ընկած էր ինչպես անցյալի, այնպես էլ ժամանակակից սոցիոլոգիական տեսությունների հիմքում:
Ֆրանսիական լուսավորիչները, ելնելով արտաքին միջավայրի որոշիչ դերից, ասում էին, որ մարդը ծնվում է իր բնույթով բարի, իսկ չար կամ արատավոր է դառնում հասարակության պայմանների ազդեցության ներքո:

Ժ.Ժ.Ռուսոն գտնում էր, որ «Չարիքի գլխավոր աղբյուրը անհավասարությունն է: Անհավասարությունից ծագում է հարստությունը հարստությունից ծնվում են ճոխությունն ու անգործությունը»:

Տարբերելով մարդու բնական ու հասարակական վիճակները՝ Ռուսոն գրում է. «Ես նկատում եմ երկու անհավասարություն մարդկային ցեղում. մեկը անվանում են բնական կամ ֆիզիկական, քանի որ այն տրված է բնությունից, մյուսը կարելի է անվանել բարոյական կամ քաղաքական, քանի որ այն կախված է պայմաններից և ծայրահեղ ձևով դարձել է օրինական՝ մարդկանց համաձայնությամբ»:

Մարդը մշտապես փորձել է կատարելագործել պատմությունը, բանականացնել հասարակական կյանքը, այնտեղ ներդնել գիտակցական նպատակ,հասարակությունը տանել ճիշտ ուղիով, կույր անհրաժեշտության տեղ հաստատել կարգուկանոն, քաոսի տեղ՝ ներդաշնակություն: Այդ գաղափարը իդեալի ձևով եկել է դեռևս Պլատոնից և դրսևորվում է նաև արդի պայմաններում: Պատմական իմացության բնագավառում չենք կարող շրջանցել մարքսիզմի տեսությունը, որի համաձայն՝ հասարակական կյանքն այլ բան չէ, եթե ոչ իրենց գիտակցական նպատակը հետապնդող մարդկանց պատմական գործունեության արդյունք:

Ж.Ж. Руссо, О причинах неравенства, М., 1907, с. 19.
Ф.Гегель, Философия истории, М. 1993г,

Կ. Մարքսը գտնում էր, որ հասարակության մեջ մարդն իրականացնում է իր սեփական գիտակցական նպատակը, որը, որպես կանոն, որոշում է նրա գործողությունների եղանակն ու բնույթը, որին նա ենթարկում է իր կամքը: Նպատակը, լինելով մտայինի ու իրականի միասնություն, հնարավորություն է տալիս հասկանալու մարդուն ոչ թե պատմական անհրաժեշտության ձեռքին խաղալիք, այլ որպես իր կյանքի ստեղծող ու տնօրինող, որպես պատմական շարժման հիմք ու էություն:

Միլիոնավոր մարդկանց գիտակցական նպատակների, ցանկությունների, պահանջմունքների և շահերի համար մղվող գործունեության շնորհիվ է կերտվում մարդկային պատմությունը: Այս հարցը քննարկելիս պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ գիտակցական նպատակը, նպատակաուղղված գործունեությունը երբեմն հասարակության մեջ կարող են հանգեցնել բոլորովին անսպասելի արդյունքի:

XVIII դարում Ֆրանսիական հեղափոխության նպատակն էր ստեղծել ազատության, արդարության, հավասարության վրա հիմնված բնական հասարակարգ, սակայն արդյունքում ստեղծվեց նոր միապետություն՝ Ն. Բոնապարտի կայսրությունը:

Բացի այդ, նպատակն անհրաժեշտ է ուսումնասիրել նպատակն իրագործող միջոցի հետ ունեցած կապի մեջ, որովհետև երբ մարդն իր նպատակին հասնում է ոչ համապատասխան միջոցով, ապա դա հանգեցնում է բարոյական վարքի շեղումների:
Հասարակական կյանքում, ինչպես առանձին մարդիկ, այնպես էլ մարդկային մեծ և փոքր խմբերը, հաճախ առաջնորդվում են «Նպատակն արդարացնում է միջոցները» հայտնի դրույթով, որն առաջադրել է Վերածննդի դարաշրջանի իտալացի նշանավոր փիլիսոփա Ն. Մաքիավելին: Հասարակության մեջ միշտ էլ եղել են և կլինեն մաքիավելական դիրքորոշում ունեցող որոշ մարդիկ, որոնք իրադրությունն ու այլ մարդկանց կարող են ծառայեցնել իրենց նպատակներին: Այն, որ մարդը բնական էակ է, դրանում ոչ մեկ չի կասկածում: Մարդը հասարակական էակ է, ծննդյան օրից միջ՝ կյանքի վերջին օրը, մարդը ապրում է հասարակության մեջ և շփվում այլ մարդկանց հետ: Մարդկային հասարակության գործունեության արդյունքում են ստեղծվում պատմահասարակական հարաբերությունները, զարգանում քաղաքակրթությունն ու ստեղծվում մշակույթ:
Մարդու անցյալի , ներկայի ու ապագայի ձևավորման մեծ մասը կառուցում է շրջապատող հասարակությունը կազմող մարկանց միջամտությամբ: Հասարակությունը կարող է ազդել անհատի մտածելակերպի , շարժուձևի, հոգեբանության վրա :
Ոչ միայն հասարակությունը այլ նաև դրա բացակայությունը նույնպես կարող է ազդել մարդու վրա լինի նա կայացած թե ոչ: Սա բազմիցս է ապացուցվել:
Հասարակությունն ու անհատը փոխկապակցված երևույթներ են ու մեկն առանց մյուսի չի կարող գոյատևել… չէ որ անհատների բազմությունն է հենց դառնում հասարակություն…
Յուրաքանչյուր մարդ ոչ միայն անհատ է իր առանձնահատկություններով, այլև անձնավորություն, որը միավորում է հասարակական էթնիկ առանձնահատկությունների սոցիալական առանձին խմբերի տիպական առանձին գծերը:

Հասարակությունն ու անհատը փոխկապակցված երևույթներ են ու մեկն առանց մյուսի չի կարող գոյատևել… չէ որ անհատների բազմությունն է հենց դառնում հասարակություն… Յուրաքանչյուր մարդ ոչ միայն անհատ է իր առանձնահատկություններով, այլև անձնավորություն, որը միավորում է հասարակական էթնիկ առանձնահատկությունների սոցիալական առանձին խմբերի տիպական առանձին գծերը:

Հասարակությունը կարող է պաշտոնապես ճանաչել անհատի կամ խմբի արժանիքները՝ նրանց որոշակի կարկավիճակ շնորհելով, եթե վերջիններս իրականացնում են ցանկալի կամ հավանության արժանացած որոշակի գործողություն:

Հասարակությունն այն բաց, պլյուրալիստական հասարակությունն է, որը հարաբերականորեն անկախ է պետությունից, բաղկացած է ազատ և պատասխանատվություն կրող անհատներից, որոնց ինքնուրույն գործունեությունն ուղղված է համընդհանուր քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ խնդիրների լուծմանը:Անառողջ հասարակությունում սկսվում են շեղումներ: Երբեմն հաղթում է ֆինանսական ցինիզմը, ազգի շահերն անտեսվում են, ազգային վերնախավը նվաստացվում կամ ոչնչացվում է: Ամբողջատիրության պայմաններում հասարակական կյանքն ամբողջապես վերահսկում է պետական իշխանությունը, մարդու իրավունքներն ու ազատությունները ապահովված չեն, տնտեսությունը կառավարվում է վարչահրամայական մեթոդներով, բնականաբար, հասարակական կյանքում մասնակցությունը կարող է լինել միայն որպես պետական իշխանության կողմից առաջարկվող կամ վերահսկվող գործունեություն:
Անհատների կողմից տարատեսակ միավորումների ինքնուրույն կազմավորումը, հասարակության՝ սեփական նախաձեռնությամբ խնդիրների լուծումը դառնում են անհնարին: Հետևաբար՝ ամբողջատիրության պայմաններում քաղաքացիական հասարակություն գոյություն ունենալ չի կարող: Ամբողատիրության պայմաններում պետությունը և հասարակությունը նույնանում են:
Մարդու կյանքի իմաստի հարցն իր մեջ պարունակում է այնպիսի կարևոր արժեքներ , ինչպիսիք են բարին , ճշմարտությունը , գեղեցիկը : Այսինքն , մարդն իր ամենօրյա արարքներում պիտի առաջնորդվի բարության և գեղեցկության օրենքներով : Յուրաքանչյուր անձ անհատ է, ով ունի կարծիք, որով առաջնորդվում է, որը կարող է փոխվել կամ չփոխվել: Հաճախ հասարակությունը փորձում է ստիպողաբար ազդել անհատի տեսակետի վրա: Թույլերի հանդեպ ստացվում է, ուժեղների հանդեպ՝ ոչ այնքան: Եթե հասարակությունը սկսի մտածել ուժեղներին թուլացնելու մասին, որպեսզի իրենց իշխանությունն էլ՛ ավելի տարածվի, ապա ժամանակի անտեղի վատնում կլինի, ինչը քչերն են ցանկանում: Այնպես որ, ավելի լավ է ամեն մեկն ուղղակի ունենա իր տեսակետը, չազդի ուրիշների կարծիքի վրա և փորձի լսել ու հասկանալ ասվածի ողջ իմաստը:
Մարդու կատարած ցանկացած գործ , արարք պիտի ունենա բարոյական հնչեղություն և նշանակություն :

Հասարակության բևեռացումը. սոցիալական արդարության՝ պետության երաշխիքների անարդյունավետ լինելը, աղքատության մակարդակը և հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը: Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության զարգացումն անխուսափելիորեն պայմանավորված է քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացով:

Միաժամանակ, մարդ, որպես սոցիալական հարաբերությունների սուբյեկտ, ունի ինքնավարություն, հասարակությունից որոշակի չափով անկախություն: Անձնական անկախությունը ենթադրում է ինքնագիտակցության, ինքնավերլուծության, ինքնագնահատման, ինքնավերահսկման ընդունակության առկայություն:

Ժամանակակից մարդու կեցության համընդհանուր ձևի՝ գլոբալիզմի պայմաններում, երբ տեղի են ունենում սոցիալական աննախադեպ, խորքային փոխակերպումներ, սեփական տեսակը պահպանելու համար մարդը պետք է վերադառնա իր գոյության լիակատար ամբողջականությանը, իր իրական հումանիստական էությանը, կենսակայուն զարգացումն ապահովելու համար հետևի ոչ թե ունենալու, այլ լինելու (Է. Ֆրոմ) գաղափարախոսությանը: Մարդու մեջ կան այնպիսի դրական որակներ (այլասիրություն, հերոսականություն, նվիրում և այլն), որոնք զարգացնելով և որոնց վրա հենվելով՝ հնարավոր է կատարելագործել սոցիալական միջավայրը և միջանձնային հարաբերությունները, մարդու հոգեբանական պաշարներն ամրապնդելով՝ օգնել նրան՝ հարմարվելու կեցության նոր իրողություններին ու իրադարձություններին :

Դրա համար անհրաժեշտ է զարգացնել հենց իր իսկ մարդու մասին գիտելիքները, հաշվի առնել իրականացվող տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ բարեփոխումների մարդաբանական տեսանկյունները, միշտ հիշել, որ կյանքը ո՛չ հանդիսախաղ է և ո՛չ էլ տոն. կյանքը դժվար զբաղմունք է, և նրա միակ չափանիշը պետք է լինի ոչ թե երկարատևությունը կամ հաճոյաշատ օրերի առատությունը, այլ այն, թե ինչպես է այն օգտագործվում:
Ի վերջո, արժանավայել ապրած կյանքը պետք է չափել ոչ թե վայելչաշատ տարիներով, այլ արարքներով: Նրանք, ովքեր յուրաքանչյուր արշալույսը դիմավորում են որպես կյանքի սկիզբ, իսկ վերջալույսը՝ ավարտ, և այդ կարճատև կյանքերից յուրաքանչյուրը նշում որևէ բարի արարքով՝ ակնթարթն իսկ հագեցնելով մարդկային խորին բովանդակությամբ, ապրում են լիարժեք, իմաստավորված ու արժանապատիվ կյանքով:

Անձի ինքնագիտակցությունը որոշում է կենսական դիրքորոշումը, վարքագծի սկզբունքները, որոնք հիմնված են աշխարհայացքային կողմնորոշումների, սոցիալական արժեքների, գաղափարների և բարոյական նորմերի վրա: Մարդը, ինչպես և մնացած կենդանի արարած ները, բնական էակ է, որն ունի բնության օրենք ներին համապատասխան, այսինքն՝ բնական ճանապարհով ձևավորված ու զարգացող մարմին և բնական պահանջմունքներ: Այդուհանդերձ, մարդը կենսաբանորեն ավելի զարգացած է, քան մնացած կենդանիները:

Ж.Ж. Руссо, О причинах неравенства, М., 1907,

Տեխնոլոգիական և մշակութային զարգացման նույն մակարդակի վրա գտնվող հասարակություններից գոյատևման ավելի լավ հնարավորություն ունի մեկուսացած հասարակությունը, քան մյուսների հետ սերտ հարաբերությունների մեջ գտնվողը, որոնք կարող են շորթել իրենց նյութական ռեսուրսները: Այլ հասարակություններին դիմադրելու անկարողությունը սովորաբար ավարտվում է թույլ մշակույթի կլանմամբ: Մարդկային հասարակության պատմությունը հասարակական առաջընթացի մի շղթա է, որն անցել է մի շարք փուլեր՝ յուրաքանչյուրին բնորոշ օրինաչափություններով:
Ըստ ֆրանսիացի փիլիսոփա-լուսավորական, «պրոգրեսիվ տեսության» հիմնադիր Ժան Մարի Կոնդորսեի(1743-1794թթ.), հասարակական առաջընթացը ունեցել է հետևյալ փուլերը.

• Մարդկանց նախնադարյան կացութաձև

• Անցումը անասնապահությունից երկրագործության

• Աշխատանքի բաժանման շրջան

• Հին Հունաստան

• Հին Հռոմ

• Միջնադար

• Գրատպության շրջան

• Նոր ժամանակներ

• Ապագայի հասարակություն՝կապիտալիզմ

Հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ տնտեսական (դա արտադրության, սպառման, փոխանակաման և բաշխման հանրագումարն է), սոցիո-էթնիկ (տոհմ՝ արնակցական-ազգակցական, ցեղ՝ ազգակցական, ժողովուրդ, ազգ՝ կազմակերպված ամբողջություն, որն ունի միասնական հոգեբանություն, մշակույթ,ավանդույթներ, լեզու, տարածք, տնտեսական կապեր և այլ) և սոցիալական (դասակարգեր, սոցիալական խմբեր և այլն), քաղաքական (պետություն, քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ և այլն), հոգևոր (փիլիսոփայական, կրոնական, էթնիկ, գեղագիտական, իրավական, քաղաքական պատկերացումները, ինչպես նաև մարդկանց տրամադրությունները, զգացմունքները, աշխարհայացքը, սովորույթները, ավանդույթները և այլն) զարգացման յուրաքանչյուր փուլում կրում են որակական փոփոխություններ:
Ֆրանսիական լուսավորականները խոսելով բանականության և արդարության սկզբունքի վրա ստեղծված հասարակության մասին, հաճախ օգտագործում էին քաղաքակրթություն բառը (civilis-լատիներեն՝քաղաքացիական, պետական, հասարակական բառից):

՝

Ф.Гегель, Философия истории, М. 1993г,
А. Тойнби, Постижение истории, Библиотека Гумер-история, Часть первая
Предварительная классификация

Հին հռոմեացիների պատկերացմամբ քաղաքակիրթ էր համարվում նստակյաց քաղաքային կենցաղով ապրող հասարակությունը, որը նրանք հակադրում էին հետամնաց, բարբարոսական հասարակությանը:

Անգլիացի մշակութաբան Ա. Թոյնբին, վերլուծելով մարդկային հասարակության պատմությունը, այն բաժանել է տեղական քաղաքակրթությունների՝

Ուղղափառ-քրիստոնեական, կամ բյուզանդական հասարակություն (Հարավ Արևելյան

Եվրոպա և Ռուսաստան):

• Իսլամական հասարակություն(հորիզոնական՝ Հյուսիսային Աֆրիկայից և

Ատլանտյան օվկիանոսից մինչև Միջին Արևելք և Չինական Մեծ պարիսպ):

• Հինդու հասարակություն (արևադարձային ենթամայրցամաքային Հնդկաստան):

• Հեռավորարևելյան հասարակություն:

• Արևմտյան քրիստոնեական հասարակություն (Արևմտյան Եվրոպա, Ամերիկա,

Ավստրալիա):

• Երկրների խումբ, որը ընդգրկում է միաբնակ քրիստոնյաներին Հայաստանում,

Միջագետքում, Եթովպիայում և Եգիպտոսում (այս խումբը կոչում է

մնացորդային, քանի որ հեղինակը դրանք համարում է հին քաղաքակրթությունների

մնացորդը):

• Լամայականների և բուդդայականների խմբերը Տիբեթում և Մոնղոլիայում,

Ցեյլոնում(Շրի Լանկա), Բիրմայում, Թաիլանդում(մնացորդային խումբ):4

Բոլոր քաղաքակրթությունները կամ տեղական հասարակությունները ունեն

որոշակի ընդհանրություններ՝ ծագում (գենեզիս), յուրացնող տնտեսաձևից

անցում արտադրող տնտեսաձի՝ այն է աշխատանքի հասարակական բաժանում,

շերտավորոված հասարակության,քաղաքների առաջացում, հասարակական

հարստության կուտակում, գիր, ժառանգականություն:

Ժամանակակից հասարակության կառուցվածքը

Սոցիալական ցանցերում կարդալով մարդկանց մտորումները՝ զարմանալի բան նկատեցի: Ես միամտաբար կարծում էի, որ պայմանական կապիտալիզմի 20 տարիների ընթացքում մենք գոնե ընդհանուր գծերով պատկերացնում ենք, թե ինչպես է կառուցված մեզ շրջապատող հասարակությունը: Բայց պարզվում է, որ, ցավոք, դա այդպես չէ:
Դա հատկապես ցայտուն արտահայտվեց ուկրաինական իրադարձությունների ընթացքում՝ դատելով մարդկանց արձագանքից: Այդ պատճառով որոշեցի այս սյունակը նվիրել պատմությանն այն մասին, թե ինչպես է կառուցված ժամանակակից հասարակությունը: Գոյություն ունի պատրանք, թե զարգացած հասարակությունները (ԱՄՆ, Եվրոպա) այլ կերպ են կառուցված, քան Հայաստանը կամ, ասենք, Ռուսաստանը: Իրականում դրանք նման են, տարբերությունը միայն որոշակի հասարակական մեխանիզմների ու ինստիտուտների առկայության ու որակի մեջ է: Բոլոր հասարակություններում, որտեղ տնտեսության հիմք է հանդիսանում շուկան, վաղ թե ուշ ձեւավորվում են մարդկանց հետեւյալ կատեգորիաները.

1. «Վերնախավ կամ էլիտա»: Դրանք այն մարդիկ են, ովքեր իրենց ֆինանսական կամ հասարակական դրությունից ելնելով՝ զգալի ազդեցություն են գործում հասարակության վրա: Բայց այստեղ կարեւոր է չտրվել խաբկանքին: Մարդիկ, ովքեր հանդիսանում են հասարակական գործիչներ՝ քաղաքական գործիչները, գրողները, հայտնի անձինք, շատ հաճախ վերնախավ չեն, այլ պարզապես աշխատում են վերնախավի համար: Զարգացած հասարակություններում վերնախավն այնքան էլ հրապարակային չէ, այն չի ցանկանում ցուցադրել իրեն այս կամ այն իրադարձությունների ժամանակ: Կարեւորագույն բոլոր քննարկումները տեղի են ունենում փակ ակումբների պատերի հետեւում, մասնավոր ընթրիքների ժամանակ, որոնց հրավիրվում են միայն ընտրյալ հյուրերը: Վերնախավը բաղկացած է մարդկանց երկու էապես տարբեր խմբերից՝ նրանց պայմանականորեն անվանենք «ֆինանսական էլիտա» եւ «ազգային էլիտա»: Առողջ հասարակության մեջ վերնախավը միշտ հավասարակշռված է. այնտեղ ներկայացված են ինչպես կապիտալի, այնպես էլ հասարակության շահերը: Կապիտալը, հասկանալի է, ներկայացնում է ֆինանսական վերնախավը՝ փող ունեցող մարդիկ: Ազգային վերնախավը ներկայացված է այն մարդկանց միջոցով, ովքեր ունեն հեղինակություն, նվիրված են ազգին ու պատրաստ են ծառայել նրան իրենց կյանքի գնով: Շատ հաճախ ազգային վերնախավում հայտնվում են զինվորականները, հատկապես՝ պատերազմներից հետո: Այդպիսի մարդիկ ֆինանսական վերնախավին հարկավոր են որպես համախմբող գործոն, որպես հասարակության հետ խաղաղ գոյակցելու միջոց, որի հաշվին ֆինանսական վերնախավը ապահովում է իր բարօրությունը: Նրանք կրում են ազգային գաղափար, խաղաղություն եւ համաձայնություն են ապահովում հասարակության մեջ: Վերնախավի մի մասն ուշադիր հետեւում է մյուսին: Ֆինասական վերնախավը, պրագմատիկ եւ զգոն լինելով, հետեւում է, որպեսզի ազգային վերնախավում չլինեն շեղումներ դեպի պոպուլիզմ, ազգայնականություն, չծնվեն հասարակության կայունության համար վտանգ պարունակող գաղափարներ:

.

Մյուս կողմից, ազգային վերնախավը վերահսկում է, որպեսզի կապիտալը վնաս չհասցնի հասարակությանը, չգործի ի շահ թշնամիների, հարթում է տարաձայնությունները տարբեր խմբերի միջեւ եւ հավասարակշռում է նրանց շահերը: Փոխադարձ ազդեցությունը հնարավոր է, քանի որ վերնախավի մի մասը մեծապես զգում է մյուսի կարիքը, եւ բոլորն իրենց զգում են նույն նավակում: Անառողջ հասարակությունում սկսվում են շեղումներ: Երբեմն հաղթում է ֆինանսական ցինիզմը, ազգի շահերն անտեսվում են, ազգային վերնախավը նվաստացվում կամ ոչնչացվում է, իսկ կապիտալի շահերը կրում են անդրազգային բնույթ: Մյուս դեպքերում, երբ գերակայում է ազգային վերնախավը, սովորաբար սկսում է լճանալ տնտեսությունը, որի շահերն անտեսվում են: Պրագմատիկ մտածելակերպ ունեցող ֆինանսական վերնախավի թուլացումը վերելքի ճանապարհ է բացում բազմաթիվ դատարկաբանների եւ պոպուլիստների համար: Գաղափարների վրա չափից դուրս կենտրոնացումը եւ դրանց բախումը՝ անկախ հասարակության իրական շահերից, ծնում է վերնախավի պառակտում, ինչը կործանում է ազգը: Ազգային վերնախավի ընդհանուր համոզմունքն առ այն, որ միայն ինքն է հասկանում, թե ինչ է անհրաժեշտ հասարակությանը, զուգորդված հիմնական տնտեսական ուժերի շահերի անտեսման հետ, հանգեցնում է հակամարտությունների եւ նույնիսկ հեղափոխությունների, որոնք բերում են վերնախավի փոփոխմանը, որի արդյունքում հիմնականում գերիշխում է ֆինանսական վերնախավը, քանի որ ազգայինը հեղինակազրկել է իրեն: Եվ սկսվում է այն նույն ցինիզմի դարաշրջանը, որի մասին մենք քիչ առաջ խոսում էինք: Եթե իրավիճակը չհավասարակշռվի, այն կդառնա հավերժական ճոճանակ, երբ վերնախավի երկու մասերը համաձայնություն փնտրելու փոխարեն գտնվում են մշտական պայքարում եւ մշտապես վտանգավոր կերպով ճոճում են նավակը: Այդպիսի հասարակության մեջ ոչ բարգավաճում, ոչ էլ զարգացում լինել չի կարող:

2. «Իշխանություն»: Իշխանությունը ծառայում է վերնախավին, կամ հանդիսանում է նրա մի մասը: Նախկինում էլիտան իշխանությունը միշտ իր ձեռքն էր պահում, եւ այդ ժամանակ ի հայտ էր գալիս բոնապետությունը: Բոնապետներն իրենց տարբեր կերպ էին անվանում՝ առաջնորդ, թագավոր, կայսր, սուլթան եւ այլն: Հիմա էլիտան չի ցանկանում ղեկավարել երկիրը. դա կեղտոտ ու նյարդային աշխատանք է, եւ վերնախավը այդ գործառույթը «աութսորսի» է հանձնում իշխանությանը: Այդ գործընթացի տրամաբանությամբ, իշխանությունը չպետք է դեմ դուրս գա վերնախավի շահերին, այլապես կհեռացվի եւ կփոխարինվի ուրիշով: Իշխանությունը դա գիտի, բայց երբեմն լինում են խռովություններ, երբ իշխանության եկած մարդիկ փորձում են փոխարինել վերնախավին՝ կազմակերպելով «պալատային հեղաշրջումներ»:

Այդժամ սկսվում են հակամարտությունները, որոնք կարող են տարբեր ավարտ ունենալ: Որպեսզի նման հակամարտություններ չառաջանան, վերնախավին ձեռնտու է ունենալ իշխանության ղեկին կանգնած մարդկանց փոխելու պարզ եւ պաշտոնական մեխանիզմ: Արեւմտյան երկրներում այդ նպատակով ստեղծվել է «ժողովրդավարությունը»: Չինաստանում կազմակերպվել է էլիտայի պարբերական փոփոխություն: Ռուսաստանում այդպիսի գործիքի անհրաժեշտություն չկա, քանի որ երկիրն, ըստ էության, ղեկավարում է հենց վերնախավը. նա իշխանությունը ոչ ոքի չի վստահում:

3. «Քաղաքացիներ»: Դրանք այն մարդիկ են, ովքեր չեն վստահում իշխանությանն ու չեն սիրում նրան, համարում են նողկալի եւ ցինիկ: Նրանք իրենց նպատակն են համարում պայքարն իշխանության հետ սեփական իրավունքների համար: Վերնախավը վախենում է այդ մարդկանց հետ անմիջական բախումից, այդ պատճառով «քաղաքացիական հասարակություններում», որտեղ քաղաքացիների թիվը մեծ է, վերնախավը չի գտնվում իշխանության ղեկին: Քաղաքացիները ժողովրդին կարող են տրամադրել՝ ում դեմ ցանկանան, եւ քանի որ իշխանության գործողությունները տեսանելի են բոլորին, ապա դրա ղեկին կանգնած մարդիկ ամենագլխավոր թեկնածուներն են քաղաքացիների կողմից հարձակումների համար: Քաղաքացիները հաճախ միամիտ են, մակերեսորեն են դատում, չեն ըմբռնում խորը գործընթացները եւ չեն հասկանում հասարակության վրա ազդող բոլոր կողմերի շահերը, այդ պատճառով չեն տեսնում այս կամ այն իրադարձությունների իրական պատճառները: Նրանք գրեթե միշտ վստահ են, որ ժողովրդավարությունն իշխանությանը ղեկավարելու (հետաքրքիր է, այդ դեպքում իշխանությունն ինչո՞ւ պետք է խրախուսեր ժողովրդավարությունը) եւ իրենց շահերը պաշտպանելու իրական գործիք է, ինչը բացարձակ պատրանք է միայն: Իշխանությունն ատում է քաղաքացիներին եւ նրանց կոչնչացներ ցանկացած պահի, սակայն ստիպված է հանդուրժել, քանի որ, որքան էլ պարադոքսալ է, քաղաքացիներն անհրաժեշտ են էլիտային: Վերնախավի ֆինանսական մասը սովորաբար ակտիվ կենսակերպով մարդկանց կարիք ունի, ովքեր ունակ են դառնալ տնտեսության շարժիչ ուժը: Էլիտայի ազգային մասը քաղաքացիներին ընկալում է որպես վերնախավի հավանական անդամների. ունենալով որոշակի արժանիքներ, արտակարգ խելք եւ անձնական որակներ՝ քաղաքացին ունի բոլոր հնարավորությունները հայտնվելու վերնախավում: Հենց վերնախավն է քաղաքացիներին պաշտպանում իշխանության ոտնձգություններից: Բայց հասարակության կայունության եւ դրանում իր ազդեցության պահպանման համար վերնախավին հարկավոր են կառավարելի քաղաքացիներ: Շահարկման հիմնական գործիքը «ազատ ԶԼՄ-ներն են», որոնք առատաձեռն ֆինանսավորվում են վերնախավի կողմից: Չվստահելով իշխանությանը՝քաղաքացիները տեղեկատվության այլընտրանքային աղբյուրների կարիք ունեն: Վերնախավն օժանդակում է այդպիսի աղբյուրներին, ստեղծում է նրանց անկախության պատրանք՝քաղաքացիների կարծիքը կառավարելու նպատակով: Քաղաքացիները վերնախավին անհրաժեշտ են իշխանությունը վերահսկելու համար, որպեսզի վերջինս դուրս չգա ափերից եւ չփորձի վերնախավի փոփոխություն ձեռնարկել: Եթե տեղական վերնախավերն ապաշնորհ են եւ ունակ չեն հարթել շփումը քաղաքացիների հետ, վերջիններս հայտնվում են արտաքին վերնախավերի իշխանության տակ, որոնք կարող են իրենց շահերից ելնելով՝ շահարկել նրանց եւ հաճախ տրամադրել սեփական հասարակության դեմ:
4. «Ժողովուրդ»: Ժողովուրդը առօրյա պայմաններում լոյալ է իշխանությանը: Իշխանությունը դրա համար «սիրում է» ժողովրդին, ավելի ճիշտ՝ հանդուրժում է: Իշխանությունը կգերադասեր ունենալ բթամիտ ժողովուրդ՝մրջյունների նման, որոնք լուռ կկատարեն իրենց գործը եւ ամեն ինչի կդիմանան՝ պատրաստ ցանկացած զրկանքների:

.

Հեղափոխությունների եւ հասարակական այլ կատակլիզմների ժամանակ քաղաքացիները ժողովրդին ուղղորդում են իշխանության դեմ պայքարին, եւ այդպիսի պահերին վերնախավը փորձում է պահպանել իր դիրքը՝ ապստամբ ժողովրդի էներգիան ուղղելով դեպի իշխանությունը եւ իշխանությանը հանձնելով ժողովրդի քմահաճույքին: Վերնախավի համար հանգամանքների լավ դասավորության պարագայում, իշխանությանը գահընկեց անելով՝ ժողովուրդը հանգստանում է եւ տուն գնում: Վերնախավն աստիճանաբար ուշքի է գալիս եւ իշխանության բերում այլ մարդկանց՝ ստեղծելով փոփոխությունների պատրանք, եւ կյանքը շարունակում է ընթանալ իր հունով: Մեծ փոփոխությունների դարաշրջանում ձեւավորվում են մրցակցող վերնախավեր, եւ այդ ժամանակ ազգային հուզումներն օգտագործվում են հասարակության նկատմամբ վերահսկողության, վերնախավերի փոփոխության նպատակով: Որոշ դեպքերում խնդիրը լուծվում է հեղափոխությամբ, երբեմն հասունանում են քաղաքացիական պատերազմներ: Սովորաբար հաղթում է այն վերնախավը, որն ունի ավելի մեծ տնտեսական հզորություն, սակայն լինում են նաեւ բացառություններ: Ցանկացած պարագայում, տուժողը միշտ լինում է ժողովուրդը: Երբեմն վերնախավերի փոփոխությունը տեղի է ունենում ոչ ցավագին. տեխնոլոգիաների ու մարդկանց կենսակերպի զարգացմանը զուգահեռ՝ տնտեսական հին առաջնորդներին փոխարինելու են գալիս նորերը, եւ տեղի է ունենում վերնախավերի ռոտացիա:

Ցանկացած ժամանակակից հասարակություն բաղկացած է վերոնշյալ հիմնական «բաղադրիչներից», բայց, հաշվի առնելով պատմական կամ մշակութային առանձնահատկությունները, տարբեր հասարակություններ կարող են ունենալ իրենց ներհատուկ մանրուքներ: Օրինակ, վերնախավը կարող է լինել բազմամակարդակ, ինչպես Հնդկաստանում, որտեղ հնուց ի վեր գոյություն է ունեցել կաստային համակարգը: Ժողովուրդը նույնպես կարող է անհամասեռ լինել եւ ներառել կառուցվածքային տարբեր գոյացություններ՝ տարատեսակ ու բեւեռացված սոցիալական խմբերի տեսքով՝ սեփական վերնախավերով: Բայց որոշակի ընդհանրացման դեպքում բոլոր հասարակությունները համապատասխանում են այս սխեմային: Սխեման հարմար է նրանով, որ դրա միջոցով կարելի է հեշտությամբ վերլուծել հասարակական տարբեր գործընթացները: Հասկանալով այն՝ կարելի է նաեւ բավականին ճշգրիտ կանխատեսել քաղաքական այս կամ այն իրադարձության արդյունքը:Մասնավորապես, դրանից հասկանալի է, որ եթե վերնախավը գոհ է իշխանությունից, ապա անիմաստ է փորձել փոխել իշխանությունը՝ չփորձելով փոխել վերնախավը: Վերնախավը հեշտությամբ կհանձնի իշխանությանը, սակայն հաջորդ իշխանությունը ամեն ինչ նույնությամբ կկրկնի՝ միայն թեթեւակի փոխելով ֆասադը: Բավականին վտանգավոր է նաեւ շեշտը դնել ազգային վերնախավի վրա՝ առանց հաշվի առնելու ֆինանսական վերնախավի շահերը, քանի որ դա հանգեցնում է հասարակության տնտեսական հիմքերը քանդող բռնապետության: Վտանգավոր է ֆինանսական վերնախավին դնել ազգային շահերին հակասող վիճակում, քանի որ այդ դեպքում նա դառնում է անդրազգային եւ կարող է գործել ազգի դեմ՝ երկիրը մատնելով քայքայման ու ինքնաոչնչացման: Ի դեպ, հենց դրանով է վտանգավոր գլոբալիզացիան

.

Տեղեկատվական հասարակություն

գաղափարը բնութագրում է հասարակության տեսակ, որտեղ տեղեկատվության և գիտելիքի ստեղծումը, օգտագործումը ու մշակումը հանդիսանում են կարևոր տնտեսական, քաղաքական և մշակութային գործոններ։

Բնութագրիչ գծերից են.

տեղեկատվության, գիտելիքի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերի մեծացումը հասարակական կյանքում

տեղեկատվական տեխնոլոգիաների, ապրանքների ու ծառայությունների, ինչպես նաև հաղորդակցության ոլորտներում աշխատող մարդկանց թվի աճը

հասարակության տեղեկատվայնացման աճը՝ հեռախոսակապի, ռադիոյի, հեռուստատեսության, Ինտերնետի, ավանդական ու էլեկտրոնային ԶԼՄ-ների կիրառմամբ

գլոբալ տեղեկատվական միջավայրի զարգացումը, որն ապահովում է մարդկանց արդյունավետ տեղեկատվական փոխգործակցությունը, մատչումը համաշխարհային տեղեկատվական ռեսուրսներին և նրանց պահանջմունքների բավարարումը տեղեկատվական ապրանքներով ու ծառայություններով

Գիտելիքահենք տնտեսությունը տեղեկատվական հասարակության տնտեսական համարժեքն է, որտեղ հարստությունը ստեղծվում է գիտելիքի տնտեսական շահագործման միջոցով։ Տեղեկատվական հասարակությանը մասնակցելու կարողություն ունեցող մարդիկ երբեմն կոչվում են թվային քաղաքացիներ :Տեղեկատվական հասարակությունը դիտարկվում է իբրև ինդուստրիալ հասարակության իրավահաջորդը։

Տեղեկատվական հասարակություն գաղափարի պիոներներից է ավստրո-ամերիկյան տնտեսագետ Ֆրից Մախլուպը դեռ 1933 թ. սկսել է ուսումնասիրել գիտելիքը իբրև տնտեսական ռեսուրս (պատենտների ազդեցությունը գիտահետազոտական աշխատանքների վրա), իսկ 1962 թ. հրատարակել է «Գիտելիքի արտադրությունը և բաշխումը Միացյալ Նահանգներում» աշխատությունը։Նա նաև առանձնացրել է գիտելիքահենք տնտեսության 5 հատվածներ՝ կրթություն, հետազոտություններ և զարգացում (research and development), ԶԼՄ-ներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական ծառայություններ։ Նշված դասակարգումն օգտագործելով նա հաշվարկել էր, որ արդեն 1959 թվականին ԱՄՆ ՀԱԱ-ի 29%-ը գիտատար ոլորտներից էր։Տեղեկատվական հասարակություն եզրի ստեղծումը վերագրվում է Տոկիոյի Տեխնոլոգիական Ինստիտուտի պրոֆեսոր Յուջիրո Հայաշիին՝ 1969 թ. Ճապոնական կառավարությանը ներկայացված «Ճապոնական տեղեկատվական հասարակություն. թեմաներ և մոտեցումներ» ու այլ աշխատանքների կոնտեքստում։ Ռադովան Ռիխտան փաստարկում է, որ գիտությունն ու տեխնոլոգիան դառնում են արտադրության անմիջական ուժեր, ուստի անցում է կատարվում գիտական քաղաքակրթության՝ հիմնված ծառայությունների, կրթության և ստեղծագործական գործունեության վրա։

Պիտեր Օտտոն և Ֆիլիպ Զոնտագը ձևակերպում են տեղեկատվական հասարակությունը իբրև հասարակություն, որտեղ աշխատողների մեծամասնությունը ավելի շատ գործ ունեն տեղեկատվության, ազդանշանների, սիմվոլների ու նկարների հետ, քան էներգիայի և նյութի։

Նիկո Ստերը նշում է նաև, որ զարգացման նշված միտումների պարագայում տեղի է ունենալու գիտելիքի մշակման հետ կապված մասնագիտությունների աճ և ճանաչողական ցածր հմտությունների ու անմիջականորեն (նյութական) արտադրության հետ կապված աշխատատեղերի նվազում։

Մարկ Պորատը տարբերակում է տեղեկատվական տնտեսության առաջնային (տեղեկատվական ապրանքներ և ծառայություններ, որոնք ուղղակիորեն օգտագործվում են տեղեկատվության ստեղծման, բաշխման կամ մշակման մեջ) և երկրորդային (տեղեկատվական ծառայություններ՝ ներքին օգտագործման համար) հատվածներ։ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը ընդհանուր տնտեսության մեջ տեղեկատվական տնտեսության բաժինը հաշվարկելու համար իբրև ցուցանիշ կիրառում է Պորատի վերոնշյալ երկու հատվածների հանրագումարը։ Ըստ այդմ՝ տեղեկատվական տնտեսությունը սահմանվում է իբրև համակարգ, որտեղ ՀՆԱ կեսից ավելին արտադրվում և աշխատողների կեսից ավելին զբաղված են տեղեկատվական տնտեսության հատվածում (կամ ըստ Դ.Բելլի՝ աշխատողների մեծամասնությունը չի մասնակցում նյութական բարիքների արտադրությանը)։ Ալեն Թուրենը նշում է. «Անցումը հետարդյունաբերական տնտեսության տեղի է ունենում այն ժամանակ, երբ ներդրումները հանգեցնում են սիմվոլիկ բարիքների արտադրության, որոնք ավելի շատ են փոխակերպում արժեքները, կարիքները ու պատկերացումները, քան նյութական բարիքների արտադրությունը կամ ծառայությունների մատուցումը։ Ինդուստրիալ հասարակությունը փոխակերպեց արտադրության միջոցները, հետարդյունաբերական հասարակությունը փոխակերպում է... մշակույթը։ Որոշիչ պահը այստեղ այն է, որ հետարդյունաբերական հասարակության մեջ ողջ տնտեսական համակարգը հանդիսանում է հասարակության կողմից ինքն իր վրա ազդելու միջոց։ Ահա թե ինչու է այն անվանվում ծրագրավորված հասարակություն. նման հասարակությունը բոլոր մակարդակներով հանդիսանում է արդյունքը իր իսկ գործունեության, այլ ոչ թե բնության օրենքների կամ մշակութային առանձնահատկությունների։» Փաստորեն նման հասարակության մեջ արդյունաբերականացվում են մշակութային վերարտադրության դրսևորումները (օր.՝ կրթությունը)։
Գաղափարի մասսայականացմանն է նպաստել նաև 1992 թ. ԱՄՆ Ազգային գիտական հիմնադրամի կոնֆերանսը և Բ.Քլինթոնի ու Ա.Գորի զեկույցը։
20-րդ դարի վերջից սկսած «տեղեկատվական հասարակություն» և «տեղեկատվայնացում» տերմինները ամուր դիրքեր են գրավում ոչ միայն մասնագիտական, այլև քաղաքական գործիչների, տնտեսագետների ու գիտակրթական ոլորտի գործիչների բառապաշարներում։

Գաղափարը հիմնականում ընկալվում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացի շնորհիվ հասարակության զարգացման նոր փուլ մտնելու իմաստով

(չնայած որոշ հնացած և մակերեսային ընկալումներում սոցիալական կառուցվածքի նշված խորքային փոփոխությունը երբեմն հավասարեցվում է ինտերնետային ռեսուրսների պարզունակ օգտագործմանը):

Ներկայումս հասարակական-քաղաքական մտքի մեջ տեղեկատվական հասարակության գաղափարը սկսում է զբաղեցնել 1970-ական թթ. հետարդյունաբերական հասարակություն գաղափարի տեղը (ընդհուպ մինչև հետարդյունաբերական հասարակություն հասկացության հեղինակ Դ.Բելլի աջակցությունը):

Հարկ է նկատել, որ դեռևս գոյություն չունի համընդհանուր ընդունված կոնկրետ ձևակերպում, թե ինչ է տեղեկատվական հասարակությունը, չնայած տեսաբանները համաձայնվում են, որ 1970-ական թթ. սկսած նկատվում է փոփոխություն, որն ազդում է հասարակությունների գործունեության հիմքերի վրա (հաշվի առնելով հասարակական կյանքի և տնտեսական գործունեության ամենատարբեր ոլորտների տեղեկատվայնացման տեխնոլոգիական ու սոցիալական հետևանքների խորությունն ու մասշտաբները՝ այն երբեմն համալիր անվանում են տեղեկատվական հեղափոխություն):

Հաշվի առնելով տեղեկատվական փոխաբերությունների ու տեխնոլոգիաների երկկողմանի կապը՝ կարելի է ասել նաև, որ մենք պատկերացնում ենք որոշ հասարակություններ (օր.՝ ճապոնական) իբրև տեղեկատվական հասարակություն, որովհետև այդպես ենք մտածում դրանց մասին։
Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ դեռևս հստակ չեն կոնկրետ միջոցների (օր.՝ ինտերնետ) և արտադրաեղանակների ազդեցության իրական չափերը վերոնշյալ գործընթացների վրա։

Տեղեկատվական հասարակության բնութագրիչներից են.

տեխնոլոգիական. տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են արտադրության, կազմակերպությունների գործունեության, կրթության ու կենցաղի մեջ

սոցիալական. տեղեկատվությունը հանդես է գալիս իբրև կենսամակարդակի բարձրացման կարևոր խթան, նաև՝ տեղեկատվության լայնամասշտաբ մատչումի շնորհիվ ձևավորվում է տեղեկատվական գիտակցություն

տնտեսական. տեղեկատվությունը հանդիսանում է վճռորոշ տնտեսական գործոն՝ իբրև ռեսուրս, ծառայություն, ապրանք, ինչպես նաև՝ ավելացված արժեքի ու զբաղվածության աղբյուր

քաղաքական. տեղեկատվության ազատությունը հանգեցնում է հասարակության տարբեր շերտերի աճող մասնակցությամբ և փոխհամաձայնությամբ քաղաքական գործընթացի

մշակութային. տեղեկատվության մշակութային արժեքի ճանաչում՝ անհատի և հասարակության զարգացման համար տեղեկատվական արժեքների հաստատման աջակցության միջոցով

. Коршунов А., Мамонтов В. Диалектика социального познания, М., 1988, с. 86:

Տեղեկատվական հասարակություն գաղափարի հիմնական քննադատությունը առնչվում է դրա ռադիկալության աստիճանի հետ: Ֆրենկ Վեբստերը նկատում է, որ նման մոտեցումները շեշտում են ոչ շարունակականությունը այնպես, կարծես՝ ժամանակակից հասարակությունը ընդհանուր ոչինչ չունի 100-150 տարի առաջ գոյություն ունեցած իր (կապիտալիստական) վիճակի հետ, մինչդեռ կարելի է պարզապես առանձնացնել կապիտալիզմի փուլեր՝ 19-րդ դարի ազատ , 20-րդ դարի կորպորատիվ և 21-րդ դարի տեղեկատվական:

Տեղեկատվական տեխնոլոգիաները նկատելիորեն փոխել են քաղաքակրթության կերպարը: Դրանք համաշխարհային տնտեսության մեջ իսկական պայթյուն են առաջացրել, որի հետեւանքով կտրուկ աճել է թողարկվող արտադրանքի քանակությունն ու որակը: Համակարգիչների եւ հաշվիչ տեխնիկայի այլ միջոցների օգնությամբ տեղեկատվության փոխակերպման գործընթացների հետ կապված մարդկային գործունեության եւ ինֆորմատիկայի նշանակությունը շատ ավելի լայն է: Այն մարդկությանն է տրամադրում նախկինում աներեւակայելի շքեղություն. գլխավոր հարստություններ են դառնում տեղեկությունները եւ գիտելիքները բացվում են ինքնակրթության անիմանալի հնարավորություններ

. Коршунов А., Мамонтов В. Диалектика социального познания, М., 1988, с. 86:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ոչ միայն հասարակությունը ,այլ նաև դրա բացակայությունը նույնպես կարող է ազդել մարդու վրա լինի նա կայցած թե ոչ: Սա բազմիցս է ապացուցվել:

Հասարակությունը իրազեկման միջոցառումներում կարևոր է մարդու իրավունքները և դրանց պաշտպանության մեխանիզմները կապել նրանց անմիջականորեն հուզող հարցերի հետ՝ կրթության բարելավում, բարեկեցիկ կյանք, արժանապատիվ կյանք, աշխատանքի տեղավորում, ցույց տալ, թե ինչ կարող են «դրանք տալ» իրենց:

Հասարակության ազդեցությունը մարդու վրա շատ մեծ է ու նա և դրական է և բացասական: Հասարակությունից դուրս մարդը չի կարող գոյատևել: Ցանկացած մարդ, ինչքան էլ պնդի, որ հասարակության դրական կամ բացասական կարծիքը իր համար նշանակություն չունի, անպայման որևէ արարք գործելիս ականջ է դնում հասարակությանը... Շատ դեպքերում նա իրենն է անում, անտեսելով հասարակությանը: Սակայն ցանկացած կարծիք, ում էլ պատկանի այն, ի վերջո նստվածք է տալիս մարդու ենթագիտակցության մեջ: Միգուցե նա իր արարքը կատարելուց անտեսի այն, սակայն հետո այդ կարծիքի ազդեցության տակ սկսի մտածել, ճիշտ էր արդյոք իր արածը թե ոչ...

Կարծում եմ, որ հասարակությունն ու անհատը փոխկապակցված երևույթներ են ու մեկն առանց մյուսի չի կարող գոյատևել... չէ որ անհատների բազմությունն է հենց դառնում հասարակություն...Անհատը հասարակության մի մասն է: Ես կարծում եմ, որ այս երկու հասկացությունները փոխկապակցված են: Տարանջատել սրանք իրարից անհնար է:

Հիշում է՞մ մի հայկական ֆիլմ « Կտոր մը երկինք», որտեղ գլխավոր հերոսը,Թորիկը դժբախտ է,քանի որ հասարակությունը դատապարտում է իր և անբարո կնոջ միությունը: Հասարակությունը դատապարտում է նրան,երբ նա երջանիկ է ,բայց անտարբեր է,երբ նա դժբախտ է: Ու քահանան եդ ֆիլմում ասում է « չեմ կարող պսակել ձեզ, քանի որ հասարակությունը չի ընդունում,հասարակությունը զորեղ է»: Թորիկը դուրս եկավ հասարակության դեմ առաջ քաշելով իր երջանկությունը : Նա ապացուցեց , որ նա ուժեղ է, որ նա կարող է պաշտպանել իր սերը :Նույն հասարակությունը ֆիլմի վերջում մեծ նախանձով նայում եր Թորիկին , թե ինչպես այս աղքատ փալանչի երջանիկ է դարձնում անբարո կնոջը: Եվ հասարակությունը նորից ընդունեց նրան , բայց այս անգամ դա նոր Թորիկներ՝ ուժեղ, անկոտրուն , երջանիկ մարդ:

Հասարակությունը տալիս է մեզ կյանքի դասեր ու շատ դեպքերում այս դասերը շատ դաժան են լինում : Բայց նրանք կոպում են մեզ, դարձնում պինդ ու դիմացքուն : Եվ մարդը փոքրիկ ձկան նման հասարակությունում , այս մեծ օվկիանոսում , պետք է գտնի իր տեղը , պետք է լինի ուշքդիր և պատրաստված բոլոր փորձությունների , որպիսի զոհ չդառնա շնաձկներին:

Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությանը արդենտվեց իր պտուղները:

<< Սա է մեր ժողովրդի հաղթանակի բանաձևը՝ մենք հաղթել ենք և հաղթելու ենք բոլոր այն դեպքերում, երբ որոշենք հաղթել, երբ մեր հույսը դնենք մեր և ոչ թե ուրիշների վրա,

երբ չընկրկենք որևէ դժվարության առաջ, երբ սիրենք, անսահման սիրենք մեր հայրենիքն ու միմյանց, երբ չփորձենք մեր նեղ անձնական շահերը կապել սեփական ժողովրդի և պետության վզին, երբ յուրաքանչյուր քաղաքացի գիտակցի, որ տեր է սեփական երկրում, ոչ թե հպատակ, երբ տիրոջ այդ զգացումն իրավունք չէ միայն, այլև պարտականություն, այլև պարտավորություն, երբ հայրենիքի ամեն անկյան վերաբերվենք խանդաղատանքով, երբ մեկս մյուսիս վերաբերվենք հարգանքով, համբերությամբ ու արժանապատվորեն: >> - ասել է Նիկոլ Պաշինյաը :

Իր պատմության մեջ առաջին անգամ հայ ժողովուրդը ոչ թե հպատակ էր, այլ քաղաքացի, ոչ թե ծառա էր, այլ տեր: Միայն միասնության ու համախմբված դեպքում հասարակությունը կարող է հաղտել:

Այսպիսով տեղեկատվական հասարակությունը կարելի է սահմանել իբրև հասարակություն, որտեղ կենսամակարդակն ու սոց-տնտեսական զարգացման հեռանկարները աճող տեմպերով կախված են տեղեկատվության տնտեսական շահագործումից:

Տեղեկատվության և տեխնոլոգիաների դերը աճում է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում, հետևապես հենց տեղեկատվության և տեխնոլոգիաների որակից է կախված մարդկային ռեսուրսի որակը, համապատասխանաբար նաև՝ արդի հասարակությունների զարգացվածության աստիճանը և հետագա էվոլուցիայի հեռանկարները: Այնուամենայնիվ, տեղեկատվական հասարկությունների ձևավորումը և հետագա զարգացումը անխուսափելիորեն հանդիպում է լրջագույն մարտահրավերների, որոնք մեծամասամբ բխում են տեղեկույթների որակից, սոցիալական զանգվածային լրատվական միջոցների աշխատանքից, հասարակության թվային և մեդիա գրագիտությունից, տեխնոլոգիաների հասանելիության և կիրառության խնդիրներից, ինչու ոչ նաև՝ պետական ոչ բավարար հովանավորչությունից: Այս աշխատանքը նպատակ ունի ներկայացնելու տեղեկատվական հասարակությունների կայացման առանձնահատկությունները և վերհանելու տեղեկատվական հասարակության կայացման հիմնախնդիրները Հայաստանում՝ քարտեզագրելով կիրառական լուծումներ:

« Գիտցի՛ր, եղել են կամքի հսկաներ, որոնք առաջարկել են Ալեքսանդր Մակեդոնացուն իր արձանը կերտել՝ Աթոս լեռը տաշելով: «Թագավորը նա է, ով կարող է»: Ես ուզում եմ, որ դու լինես թագավոր սերունդ: Քանի դեռ գետափին ես, տկար ես: Անցար, կեսար ես: Անցի՛ր, հա՛յ երիտասարդություն, անցի՛ր Ռուբիկոնը, որի հանդիպակաց ափին քեզ հաղթության դափնին է սպասում: »

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ / հատված «Որդիների պայքարը հայրերի դեմ» գրքից

Ուսումնաօժանդակ նյութի ներդրումը, վերլուծությունը և քննարկումը

Այդպիսի քննարկման օրինակ կարող է ծառայել հասարակագիտության 9-րդ դասարանի

<<Քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը >> դասը.

1 Աշակերտները կհասկանան

Քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը համակարգի կառուցվածքը:

2.Կսովորեն

Գրագետ օգտվել մեդիա հարթակից:

Կարևորություն ու նշանակություն կտան ինֆորմացիային, որպես իշխանության

աղբյուր:

3.Կգիտակցեն , որ մենք պետք է հպարտ լինենք, որովհետև մեր ազգը բազում չարչարանքներից հետո մնացել է կանգուն:

4.Կփորձեն վեր հանել ու սովորել ժողովրդավարական, իսկական քաղաքացիական

դիրքորոշում և կամավոր մասնակցության բնութագրեր

Հնարավորություն տալ աշակերտներին արտահայտել մտքերը , հիմնավորել իրենց կարծիքները:

Անցկացնել բանավեճ << Ես հասարակության մի մասնիկն եմ >> թեմայով:

Օգտագործված գրականություն

. Վիքիպեդիա ՝ ազատ հանրագիտարան

. Հայկական Հանրագիտարան www.encyclopedia.am/pages.php?bId=1&hId=530

. Սյուզի Եղոյան http://suzieghoyan.blogspot.com/2016/01/blog-post_40.html

. Кант Э. Соч., том 4, М., 1965, с. 244.

. Коршунов А., Мамонтов В. Диалектика социального познания, М., 1988, с. 86:

. Ж.Ж. Руссо, О причинах неравенства, М., 1907, с. 19.

՝Ф.Гегель, Философия истории, М. 1993г,

4 А. Тойнби, Постижение истории, Библиотека Гумер-история, Часть первая Предварительная классификация

5 Философский словарь (ред. И. Фролова), М1991г

Кутирёв В. А. Духовность, экономизм и «после»: драма взаимодействия //

"Вопросы философии", 2001, № 8 :